Արձանագրություն 1

Տաշիր համայնքում 2026թ.-ին ստեղծված մասնակցային բյուջետավորման գործընթացի կառավարման հանձնաժողովի նախապատրաստական փուլի արդյունքների նիստի

Ք. Տաշիր
07/01/2026թ., 15:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝

Նաթելլա Մուրադյանը - Համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ,

Հանձնաժողովի անդամներ՝

Սևադա Սարգսյան - Համայնքի ղեկավարի խորհրդական,
Խաչեն Մանուկյան - «Տաշիրի կոմունալ տնտեսություն և բարեկարգում» ՀՈԱԿ-ի տնօրեն,
Գոհար Մանուկյան - Ավագանու անդամ,

Համայնքի ակտիվ բնակիչ՝

Ինեսսա Խանաղյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Աստղիկ Բարոյան - Համայնքապետարանի աշխատակազմի Զարգացման ծրագրերի, առևտրի, սպասարկման, գովազդի և տուրիզմի բաժնի առաջատար մասնագետ

Օրակարգ

Տաշիր համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի շրջանակներում նախապատրաստական փուլի ավարտի ամփոփում:

Լսեցին՝

1.Հանձնաժողովի նախագահի տեղակալ Նաթելլա Մուրադյանին՝

-ողջունեց հանձնաժողովի անդամներին, ներկայացրեց մասնակցային բյուջետավորման կարևորությունը, ընթացակարգը, սկզբունքներն ու նպատակները՝ արձանագրելով նախապատրաստական փուլի ավարտը:

2. Հանձնաժողովի քարտուղար Աստղիկ Բարոյանին՝

-ներկայացրեց նախապատրաստական փուլի ավարտի վերաբերյալ տեղեկատվությունը՝

- Տաշիր համայնքի 2025թ.-ի դեկտեմբերի 24-ի N 123-Ա ավագանու որոշմամբ սկիզբ է դրվել մասնակցային բյուջետավորման գործընթացին:
- Համայնքի ղեկավարի 2025թ.-ի դեկտեմբերի 30-ի N 1077-Ա որոշմամբ ստեղծվել է գործընթացի կառավարման հանձնաժողով, հաստատվել են հանձնաժողովի իրավասությունները, գործընթացի իրականացման ընթացակարգերը, չափանիշները և ձևաթղթերը:
- Կազմվել է միջոցառումների իրականացման ժամանակացույցը:

Լսելով հանձնաժողովի նախագահի տեղակալի և քարտուղարի ներկայացրած տեղեկատվությունը, քննարկելով հետագա անելիքները, Տաշիր համայնքի մասնակցային բյուջետավորման գործընթացի կառավարման հանձնաժողովը

ՈՐՈՇԵՑ

1. Մասնակցային բյուջետավորման գործընթացի նախապատրաստական փուլը համարել ավարտված՝ դրական արդյունքներով,

2. Սկսել իրագեկման փուլը՝ ժամկետը նշանակելով սույն թվականի հունվարի 7-ից մինչև հունվարի 26-ը:

Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Ն. Մուրադյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Բարոյան